

ԱԶԳԱՅԻՆ

ՈՐՂԵՐՈՐՈՐԸ ԵՐՆ

ՉԻՆԱՐՆԵՎ ԵՒ ՀՆԳԻԿԱՐՆԵՎ ՀԱՅՈՑ ՄԻՋ.

Գեր. Գրիգորիս Արքեպիսկոպոսի ի Հնգկաստան՝ ի Չին եւ ի շրջակայսն կատարած ուղեւորութեան վերաբերեալ հետագայ գրութիւն բաւական տեղեկութիւնք կհաղորդէ աւելի Հնգկաքնակ մերազնէից վերայ, ուստի արժան կհամարիմք հրատարակել:

Ահաւաստիկ:

« Աւարտեալ Գեր. Գրիգորիս Արքեպիսկոպոսի Ծ. Նուիրակի զբազմարկածեան ճանապարհորդութիւնն ի Չին, վերադարձաք ողջամբ ի Կալկաթա ի ²⁰/₄ մարտի ամսոյս: Ի Բթաւիոյ գրեալ եմք ի ⁴/₁₆ Գեկտ. թուեալ նամակաւս զանցս ուղեւորութեանս. նոյնպէս եւ ի Սինկափօրայ՝ ⁴/₁₆ Փետ. նամակաւս: Այժմ՝ եւս գրեմք զճանօթութիւնս:

« Ի ¹¹/₂₃ Փետ. մեկնեցաք ի Սինկափօրայ առ ի վերադառնալ ի Կալկաթա Հընդրոսպան անուն շոգենաւաւ պարոնայց Աբգարեանց, եւ ի ²⁰/₄ ամսոյս հասաք Աստուծոյ այսր:

« Հօկ-Քօնկ կղզին բնակութիւն եղեալ է ձկնորսաց մինչ ցամն 1840, յորում անցանէ ի ձեռս Անգղիոյ. անտի եւ այսր սկսանի շինութիւն քաղաքին ըստ տարագու Անգղիացւոց, ի հարաւային կողմն կղզւոյն շինեալ է երեսն ընդ հիւսիս՝ յաստրոտս լերին. տեսարան հոյակապ քաղաքիս յոյժ գեղեցիկ է ձօխ

շինուածովքն՝ որ բարբոսիմք նման է Եւրոպական քաղաքի քան Ասիոյ. — փողոցքն ի նմա լայն եւ երկայն, շինուածք Տէրութեանց եւ եկեղեցեաց առաւել զարգարեն զտեսարանն. փողոցքն են ըստ մեծի մասին քարայտակ. զի վասն լեռնային դրութեան կղզւոյս ի բազում տեղիս է զառիվայր՝ եւ ի տեղիս տեղիս են քարեայ սանդուղիք, յորմէ գիւրին է իմանալ՝ զի եւ շինութիւնքն երեւին յեցեալ յիրերաց վերայ: Բնակութիւնք Չինացի գաղթականաց յարեւմտեան ծայրն են հաստատեալ անխառն յԵւրոպացւոց, բոլորովին ըստ Չինաց ճաշակի շինեալ, միայն լայնութեամբ փողոցացն տարբերի ի Չինաց քաղաքէ. ի պատճառս ազատութեանց երկրին Անգղիոյ բազում գաղթականք գան ի Չինաց զօր ամենայն. շոգենաւ գտանի յամենայն աւուրս երթեւեկ ի Չին, ի Հնգիկս, յԵւրոպ, եւ յԱմերիկա. վաճառականութիւնն՝ որպէս եւ գործառնութիւնք կարի եռանգուն. թանգութիւնն նշանաւոր. դրամն է Տակէր Ե. Բըրիլեան. Անգղիացին եւս նոյն չափով եւ կշռով հասանէ Ժարլիլ անուամբ:

Անգ գտեալ են միշտ գաղթականք Հայոց մինչ ց11 հոգիք, իսկ այժմ՝ վեց հոգիք միայն կան, որք են՝ Խաչիկ եւ Թէոփիլէ եղբարք՝ Պետրոս Մատուրեան Կալկաթացիք, Խաչիկն իբր 35 եւ եղբայրն 25 կամ 30 ամաց. ի յաջողութեան են քան զայլ մերազնեայս եւ գործ սոցա է փոխանակազիր տալ եւ ընդունիլ, միջնորդութիւնս առնեն եւ վասն գրամատանց եւ վաճառականաց. Խաչիկն խօսի զՀայերէն ըստ բաւականին, իսկ եղբայրն գօրուա-

բաւ հասկանայ միայն, զի առաւել քան զ10 ամ է որ գտանի աստ. ունին սովորութիւն յաւուրս կիւրակէից ժողովել զամենայն մերազնեայս ի տուն իւրեանց, ուր ճաշեն եւ ընթրեն: Երրորդն է՝ պարոն Ձնթլում՝ Ղազար — Աղաբէկն՝ որոյ եղբայրն Աւետիս Ղ. Աղաբէկ՝ փոխեալ էրառ Աստուած քանի ամսովք յառաջ եւ թաղեալ անդ ի հանգստարանի Անգղիացւոց: Ձնթլումն չունի յատուկ ինչ գործ իբրեւ զԱւետիսն: Սոցա եղբոր դուստրն է ամուսին Պարոն Աղեքսանգրի Յ. Աբգարեան բնակելոյ ի Կալկաթա: Զորորդն է՝ Յարութիւն Սէթ—Աւետ—Սէթ ազնիւ երիտասարդն՝ որ գիտէ զՀայերէն Քերականութիւն եւ ունի գեղեցիկ գիր. ծնեալ է ի Քանտօն քաղաք Չինաց եւ անդ մկրտեալ յԱնգղիացի Քահանայէ եւ իբր ի 12 ամաց հասակի ընկայեալ զգրոշմն ի Հայ քահանայէ ի Սինկափօր. հայրսորա հանգուցեալ Սէթն՝ ի Մատրասայ գնացեալ է ի Քանտօն ընդ ամուսնուոյն եւ յետոյ եկեալ ի Հօգ — Քօնկ. Յարութիւնն բարեկիրթ է յոյժ եւ Հայասէր՝ որ եւ է կենդանի վկայ Հայասիրութեան հօրն իւրոյ. է գրագիր ի գործս տէրութեան. պատրաստեաց ընդ փոյթ տաղանաքար մի վասն հօրն՝ որ թաղեալ է ի հանգստարանի Անգղիացւոց եւ հրաւիրեաց կատարել զպաշտօն ի վերայ գերեզմանին, որպէս զի օրհնութեամբ արկցէ գտապանաքարն. յ³/₁₅ Նոյեմբերի գնացեալ Քեր. Գրիգորիս Արքեպիսկոպոսի ի հանգստարանն հանդերձ մերազնէիւք՝ կատարեաց զՀօգեհանգստեան պաշտօնն հանդերձ երկու Ջուղայեցի գպրօք այս

ինքն Ղազար Գ. Աբգար եւ Աբգար Մ. Գ. Աբգարիւ. (սոքա գտանին աստ մասնաւոր առեւտրիւ եւ են ազգականք պարոնայց Աբգարեանց, — որք (Աբգարեանք) ունին բարի սովորութիւնս այս ինքն թողուն ձրիապէս երթեւեկել ի Չին եւ չառնուլ նաւողէք ի վաճառաց նոցին: — Ի Կալկաթայէ առաքեն ընկերքն աճառ (սապօն), իւզ, սիսեռն ի Հօգ — Քօնկ) եւ անտի առաքեն վաճառս Չինաց եւ ձաբոնի, բայց յոյժ մասնաւորս սոքա փոփոխակի մնան ի Կալկաթա եւ ի Չին եւ ապա դառնան ի Ջուղա:) Կային եւ Անգղիացիք ոմանք ի գերեզմանատանն: Եղաւ ապա քարն ի վերայ հանգուցելոյն գրեալ Անգղիարէն եւ Հայերէն օրինակ զայս. «Աստ հանգչի իւրայնոց արտասուօք մարմին Սէթ Աւէթ—Սէթի՝ որ էր մի ի հին վաճառականաց Սինկափօրայ: Եկն ի Քանտօն ի 1845 ամի: Ծնաւ ի Մատրաս եւ վախճանեցաւ ի Հօգ — Քօնկ ի 11 Փետրուարի 1875 ի հասակի 65 ամաց: Աւուրք իմ՝ որպէս հօլանի անցին եւ ես որպէս խոտ ցամաքեցայ»: Կրօնական զգացումն բարւոք լեալ է հանգուցելոյն, որով կրթեալ է եւ զորդին: Փառաւորեցաւ աստ Հայ ազգութիւն եւ լրագիրք հրատարակեցին յարգանօք եւ գովեստիւք, եւ Հայք մխիթարեցան:

Ե սորին եւ այլ մի մեծ եղբայր Յարութիւն Սամուէլ անուն՝ որ է յԱմերիկա: Հինգերորդն է՝ Պօղոս Յորգանան — Պօղոս Ռանգուցի երիտասարդըն, որ գտանի ի գրագրութեան դրամատան միոյ, է իբր 23 ամաց՝ դժուարաւ խօսի զՀայերէնն: Քեռորդի է սա

Խաչիկ Պ. Ծառուբի. Վեցերորդն է պարոն Սաեփաննոս Պօղոս-Յօհաննէսն իբր 40 ամաց, խօսի զՀայերէնն լաւ. քեռորդի է սա հանգուցեալ Սէթ Աւետ— Սեթայ եւ գտանի ի գրագրութեան գրամատան միոյ: Սոքա վեց հոգիք են բնակիչք Հօգ—Քօնկայ: Կայ եւ այլ ոմն Մանուկ Եսայի—Ներսէս անուն՝ այր պատուական եւ է Ռանգուցի: որ գրնացեալ էր ի Ռանգուցի: որ գրնացեալ էր ի Ռանգուցի ի տես ծերունի հօրն իւրոյ, զոր ետես Գրիգորիս Արքեպիսկոպոսն ի վերադարձին ի Սինկափօր, որ դարձեալ էր ի Ռանգուցայ առ ի գնալ ի Հօգ—Քօնկ վասն վաճառականութեան: Տեսաք ի Հօգ—Քօնկ եւ զպարոն ոմն Յովհաննէս անուն՝ Ղեւոնդ—Աւետուսեան, որ ի 15 ամաց հետէ մեկնեալ ի Կալկաթայէ գնացեալ է ի Քանաօն եւ ի զանազան գործս զբաղեալ՝ եւ մինչեւ ց300 մղոն ի խորս Չինաստանի գնացեալ. խօսի լաւ զՀայերէն, զԱնգլիարէն եւ զՉինաց լեզուս՝ գրելով եւ կարդալով. նման սորին չտեսի խօսող զՉինարէնն՝ թէպէտեւ Յարութիւն Սէթեանն եւս գիտէ բաւական: Յովհաննէսն դարձեալ էր ի Քանաօնայ ի Նոյեմբեւ կամէր հաստատիլ բնակութեամբ ի Հօգ—Քօնկ, է իբրեւ 37 ամաց, բաւական բարեկիրթ: Եւ որովհետեւ շոգեանուն մեր որոշեալ էր մնալ անդ մինչ ց⁴/₁₆ Նոյ՝ վասն որոյ Գեր. Գրիգորիս Արքեպիսկոպոսն գնաց եւ ի Քանաօն բուն քաղաք Չինաց ի ²⁷/₈ Նոյ. շոգեանուն ութն ժամ տեւէ ի Հոգ—Քօնկայ ի գնալն, կէսն ճանապարհի ծով է եւ կէսն գետ. վերադարձաք ի ³⁰/₁₁ Նոյ վեց ժամաւ:

Բաղմամարդ է Քանաօնն, գուցէ 2 միլիօն սգիք գտանիցին, որոց կէսն բնակին ի վերայ գետոյ նաւակօքն. անհաւատալի թուին չտեսողացն: Ազգն Չինաց է բաղմաթիւ, ժիր, գործունեայ, աշխատասէր, ճոխ, մաքրասէր ըստ բաւականին եւ սիրողք չափաւոր կենաց. արուեստ նուրբ անդ է տեսանել: Այժմ՝ չգտանի անդ Հայ որ:

Յերկուս կիւրակէս մնալով ի Հօգ—Քօնկ՝ Գեր. Գրիգորիս Արքեպիսկոպոսն ժողովէր զՀայս ի տան պարոն Խաչիկ, ուր եւ քարոզէր եւ տայր ծանօթութիւնս զազգէս եւ զեկեղեցւոյ Հայաստանեայց. քաղցր էր նոցա լըսել զանուանս Մայր Աթոռոյս եւ Վեհ. Հայրապետի. ըմպեցաւ բաժակ վասն թանկագին կենաց նորին Գերաճայրեալ Օճութեան ջերմ՝ մաղթանօք տարագրեալ զաւակացն: Ըստ պատշաճութեան հանգամանաց նոցին պատուիրեաց՝ զի գէթ յաւուրս կիւրակէից ժողովեալ ի տան՝ զճաշու ողորմեայս ասացեն ի վերայ ժամագրքի:— Երեք ամաւ յառաջ քահանայն Սինկափօրայ գնացեալ է անդ, կարելի է միշտ յանձնել նոյն քահանայից՝ որ ի լրման թէմին գնացեն միանգամ, — Գրիգորիս Արքեպիսկոպոսն ի վերադարձին չմնաց երկար ի Սինկափօր, այլ էանց ի Բթաւիա որպէս կանխաւ գրեալս եմք, հասանելով անդր ի ¹⁴/₂₆ Նոյ:

Աւնիմք ի Բթաւիա մի եկեղեցի կառուցեալ յանուն Յովհաննու Մկրտչի յամին 1854 եւ օծեալ ի 1857 ի տօնի Կաթօղիկէ Եկեղեցւոյ. բարձր է շէնքն եկեղեցւոյն ի գեանոյ իբրեւ 3 ոտք Անգղիոյ

եւ վեց սանդխտութեան եւ Բաղնիսի ի հիւսիսայն եւ ի հարաւայ, որք ունին սիւնադարգ ծածք, ի հիւսիսային կողմն է փողոցն: Որք տեսեալ են ղեկեղեցին Ամսթերդամայ՝ ասեն թէ համանման են միմեանց. պարզ է շինուածքն եւ որմունքն բարակ, ծածքըն փայտեայ, միայն ի մէջ առատաղին արտաքուստ միայն երեւի փոքրիկ կաթուղիկէ՝ ութն պատու հանաւ եւ ի վերայ խաչ: Տեղի բնակիւթեան քահանայի ի հարաւային կողմն շինեալ է. ունի բաւական արձակ բակ. շէնք եկեղեցւոյն յարտաքուստ է քառանկիւն եւ չափաւոր բարձրութեամբ: Ունի մի քահանայ առաքեալ ըստ սովորութեան ի Ջուղայէ. 15 տունք են Հայոց, բնակին մերձ յեկեղեցին, 43 արու, 30 էգ, բովանդակ 73 հոգիք. վիճակ կենացն է գոհացուցիչ: — Ի Ջաւա գտանին եւ այլ մերագնեայք ցրիւ: 60 ժամ հեռաւորութեամբ ծովեղերեայ Սմարանգ քաղաքն է, ուր 4 տուն է, 24 արու եւ 3 էգ, համայն 27 հոգիք: 5 աւուրք հեռի ի Բրթաւիոյ Սուրբայեա ծովեղերեայ քաղաքըն է, ուր 12 տուն է (ոմանք եւ ի շրջակայս Սուրբայեայ), բովանդակն 75 հոգիք. ոմանք ի նոցանէ բնկերք են վաճառականաց Բրթաւիոյ եւ Սինկափորայ, եւ ոմանք մասնաւոր առեւտրիւ երթեւեկեն ի Ջուղայէ: — Ի Բրթաւիա տեսեալ՝ զի փակեալ է դպրոցն յամին 1872 յաղագս շահեցուցանելոյ զգրամագլուխն եւ կամին վերստին բանալ, եւ ըստ որում չորս կամ առ առաւելն վեց արու եւ էգ ուսանող գտանի, եկամուտն ի տարին 8 հազար Ջաւայի Աուրի (փոքր է քան զկալկաթայի Աու-

րիս), Գրիգորիս Արքեպիսկոպոսն կանխաւ խորհրդակցեալ ընդ պարոնայս առաջարկեաց գրաւոր թէ յաւելուած ինչ արասցեն ի վերայ 600 ուրբեաց՝ զոր առաքեն ի Ջուղայ, եւ երկուս սանս ունիցին ի ձեմարանի Մայր Աթոռոյս: Ազնիւ Աղանուրն ամենայն ճգամբ աշխատեցաւ: Տեսակցեցաւ անդ եւ ընդ պարոն Մանուկ Յորգանանեանի՝ որ է այր ճեմարիտ աղգասէր. — սնոգւով չափ բերկրեցաւ յրնթեանուն յԱրարատի զանուն հանգուցեալ Քէորգայ Մանուկեան՝ զոր եւ բարերար իւր կոչէր. քաղեալ ի ճշգրիտ պատմութենէ սորին՝ առաքեսցուք այլով պատեհաւ զկենսագրութիւն Մանուկեանի՝ զոր գրեալս եմք ի Բրթաւիա: — Այրս այս վեց հարիւր ուրբի առաջէ վասն օրիորդական դպրոցի Ջուղայու, խոստացաւ զի այլ եւս 600 ուրբիս յաւելցէ եւ առաքեսցէ յօգնութիւն դպրոցին Ջուղայու, եւ կտակաւ աւանդէ առ յսպայն: Ի ¹²/₂₁ Գեկ. բնթերցաւ Կոնդակն վայելուչ հանդիսիւ, եւ ի Ծննդեանն Գրիգորիս Արքեպիսկոպոս մատուցեալ դուրք Պատարագ կատարեաց զմիւսն թափն: — Արդարեւ ցաւալի՛ վիճակ ազգիս, որ ի ներքոյ օտար աստեղաց տարագիր ի հայրենեաց ցրիւ աստ եւ անդ, ի տեսանելն զՀովիւն եւ ի լսել զանուն հայրենեաց՝ ողբայ զիւր վիճակ. որչափ քաղցր էին նոցա աւուրքն՝ յօրում մխիթարէին տեսութեամբ: — Հրատարակեցաւ եւ անդ ի լրագիրս Հոլանտացւոց անուն Մայր Աթոռոյս եւ ծանօթացան Հայ ազգութեանս առաւել: . . .

Ի ²¹/₂ Փետ. մեկնեալ ի Բթաւիոյ Հո-
լանդական շոգենաւաւ, հասար ի Սինկա-
փօր ի ²⁴/₅ Փետրվարի: Եկեղեցին շինեալ
է յամին 1835 յանուն Ս. Գրիգոր Լու-
սաւորչին եւ օծեալ ի 1836ի. ունին մի
քահանայ ի Զուղայէ. 11 տունք են
Հայոց, 37 արուք եւ 36 էգք, համայնն
73 հոգիք. չորս տունք են վաճառակա-
նաց եւ մնացեալքն ի մասնաւոր առեւ-
տուրս. գաղթականութիւն Հայոց սկը-
սեալ է աստ յամին 1819՝ յորում տի-
րեալ է Անգղիացին. վաճառաշահ է սոյն
կղզիս եւս, եւ բազմութիւն Զինաց
յոյժ: Յ ³⁰/₁₁ Փետ. ընթերցաւ Կոնդակն
վայելուչ հանդիսիւ ի միջոցի Պատա-
րագին, եւ յերեկոյին ետ Գրիգորիս
Արքեպիսկոպոս զչորս աստիճան դպրու-
թեան պարոն Պետրոս Աւետ — Սէթ
Եկեղեցապանի՝ որ է իբր ի 65 ամաց
հասակի, բնիկ Մատրասեցի՝ եկեալ ի
Սինկափօր ի 1826. այր ջերմեռանդ եւ
այրի. (յետ ընթերցման Կոնդակի ու-
ղերձ մի ընթերցաւ). կային եւ Անգղիա-
ցիք եւ այլազգ քրիստոնեայք: Ի ¹¹/₂₃
Փետ. մեկնեալ ի Սինկափօրայ, հանդիպե-
ցաք եւ ի Պինանգ կղզին, ի ¹³/₂₅ Փետ.
եւ ի հետեւեալ աւուրն մեկնեցաք
անտի առ ի վերադառնալ ի Կալկաթա:
Ի Պինանգ կղզեոջ այժմ՝ երկու տուն
կայ Հայոց, ի միումն բնակեալ երկու
եղբարք Յովհաննէս եւ Մատուր որ-
դիք Յարութիւն Անտօնի, անամուսին
եւ միայնակ, եւ ի միւսումն Մա-
րիամջան այրի տիկին Անտօնի Յարու-
թիւն — Անտօնեան վեց որդւովք՝ եր-
կու դստերքք եւ չորս թոռամքք այս
ինքն 13 հոգիք ի միումն տան. ունիմք

մի բաւական մեծ եկեղեցի, ի ճակատ
արեւմտեան դրան գրեալ ի վերայ
սեաւ մարմարի սկեղծօժ այսպէս. «Ե-
կեղեցի սրբոյն. Գրիգորի Լուսաւորչի
շինեալ յամի Տեառն 1822». երկայ-
նութիւն եկեղեցւոյն ի ներքուստ է
իբր 85 ոտք Անգղիոյ երկայն, եւ 27 ի
լայն. յարաքուստ սիւնազարդ ծածք
ունի ի հիւսիս եւ ի հարաւ եւ յարեւ-
մուտ եւ բարձր ի գետնոյն. բաւական
հոյակապ եւ բազմաճախք է քան զայլ
եկեղեցիս Հնդկաստանի յետ Կալկաթա-
յի: Ունի մի քահանայ առաքեալ ի Զու-
ղայէ, տեղի բնակութեան քահանայի
եւ ընդարձակ բակ. ի շինելն՝ միայն
չորս տունք եղեալ են Հայոց եւ յետոյ
փոխանակ աճելոյ պակասեալ է: Պատ-
ճառ շինութեան ասեն լինել Խաչա-
տուր Գալստան վաճառականն՝ որոյ
տիկնոջ գերեզման առ արեւմտեան
դրամբ եկեղեցւոյն է արտաքոյ, եւ ին-
քեան գերեզման ի Կալկաթայի Եկե-
ղեցւոջ. ծախք շինութեան Եկեղեցւոյն
անց քան զ20 հազար Դոլլար (երկու
եւ կէս Դոլլար Կալկաթայ համարի Դոլլ-
լէն) ասեն լինել. յերիս կողմունս Ե-
կեղեցւոյն փողոցք են լայնք. բաւա-
կան գեղեցիկ է Եկեղեցին եւ ի ներ-
քուստ, բայց կարօտ նորոգութեան: * * *
Ի 4/16 Մարտի 1877.
Ի Ապրիլս.
ՆՈՒԷՐ ՏԻԳՐԱՆԵԱՆ ԵՂԲԱՐՅ.
Աղէքսանդրապօլեցի Մեծ. պարո-
նայք Կարապետ եւ Տիգրան Միքայէլեան
Տիգրանեանց՝ յանուն եւ ի յիշատակ
հանգուցեալ Վարդան անուն եղբօր իւր-